ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները և հաշվի առնելով կարգապահական վարույթի իրականացման ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը սահմանելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Սահմանել ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ, նաև՝ Պալատ) նախագահի որոշումը կարգապահական վարույթի կողմերին տրամադրելու մասին ուղեկցող գրության ձևը (Ձև ԿԳ-1)՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Սահմանել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին պահանջի և կողմերի իրավունքների պարզաբանման թերթիկի ձևը (Ձև ԿԳ-2)՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Սահմանել Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակցի եզրակացության ձևը (Ձև ԿԳ-3)՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

4. Սահմանել Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակցի կողմից եզրակացությունը և կարգապահական գործը ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովին հանձնելու մասին ուղեկցող գրության ձևը (Ձև ԿԳ-4)՝ համաձայն թիվ 4 հավելվածի:

5. Ուժը կորցրած ճանաչել Պալատի նախագահի 30.03.2021թ. թիվ 62-Լ որոշումը:

6. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կարգապահական գործը սպասարկող անձնակազմի աշխատակիցներին, ինչպես նաև հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

01 փետրվարի 2023թ.
թիվ 34-Լ
ք.Երևան